ԶԱՐԹՕՆՔ-ը կարելի է կարդալ նաեւ համացանցի վրայ հետեւեալ հասցէով՝
www.zartonkdaily.com
Ինչպէս նաեւ ձեր անհատական թղթակցութիւններն ու ծանուցումները կրնաք փոխանցել խմբագրութեանս հետեւեալ հասցէներուն՝
e-mail: zartonkadl@gmail.com
zartonkdaily@yahoo.com
P.O.Box: 11-617 & 175-348 Beirut-Lebanon
Tel./Fax: +961 1 444225

# ԶԱՐԹՕՆՔ
Օրաթերթ
ZARTONK JOURNAL POLITIQUE ARMENIEN زارتونك جريدة سياسية أرمنية
77րդ Տարի, թիւ 131 (21,372) | ՇԱԲԱԹ, 20 ՅՈՒՆԻՍ 2015 | 4 էջ | 1000 Լ.Ո.

1915-2015
Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելից
ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՄ
I Remember and Demand
Je me souviens et j'exige
أنا أتذكّر وأطالب

**Լիբանանեան Լուրեր**

## Հըզպալլա-Տաէշ Բախումները Կը Շարունակուին



Փենթակոնի բանբեր Սթիվ Ուարըն նշեց, որ իրենք տակաւին չեն կրցած գործադրել սուրիացի ընդդիմադիրներ մարզելու ծրագիրը, որ սկզբունքով պէտք է ի գործ դրուէր թրքական հողերուն վրայ: Անոր խօսքով իրենք կը նպատակադրէին քանի մը հազար չափաւորական սուրիացիներ մարզել, սակայն ցարդ միայն 100-200 անձեր մարզուած են թրքական հողերուն վրայ: Այլ գծով տեղեկութիւններ նշեցին, թէ Իսլամական պետութիւն (Տաէշ) կազմակերպութենէն պատասխանատու մը եւ վեց զինեալներ սպաննուած են՝ երբ բախումներ տեղի ունեցած են Արսէլի բարձունքներուն վրայ Հըզպալլայի եւ Տաէշի զինեալներուն միջեւ: Մարդկային իրաւունքներու սուրիական խորհուրդը իր կարգին դիտել տուաւ, որ չորս անձեր առեւանգուած են Թարթուսի մօտ:

### Կառավարութեան Նիստի Կայացման Յոյսեր

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան հարցերու նախարար Ապտէլ Մութթալէպ Հենաուի յայտարարեց, որ զանազան դիրքորոշումներ եւ կարծիքներ կան կառավարութեան աշխատանքներու վերակենդանացումին կապակցութեամբ: Անոր խօսքով վարչապետ Թամմամ Սալամ շուտով պիտի արժեւորէ հաղորդակցութիւնները եւ վերջնական որոշում առնէ կառավարութեան նիստ կայացնելու կապակցութեամբ:

Միւս կողմէ, ապահովական գետնի վրայ, Զգուշաւոր Հանդարտութիւն կը տիրէ Սայտայի Այն Ալ Հելուէ գաղթակայանին մէջ: Այդտեղ տեղի ունեցած էին ընդհարումներ, որոնց հետեւանքով սպաննուած էին առնուազն երկու անձեր: Պաղեստինեան ապահովական ուժեր շրջեցան գաղթակայանի փողոցներուն մէջ կանխարգիլել համար բախումներու կրկնութիւնը, մինչ միջնորդներ աշխատանք տարին, որպէսզի հանդարտութիւնը եւ կայութիւնը ամրապնդուի:

### Քասեմ ՄԱԿ-ին Եւ Մեծ Պետութիւններուն Կոչ Կ՚ուղղէ

Հըզպալլայի ընդհանուր քարտուղարի տեղակալ շէյխ Նաիմ Քասեմ ՄԱԿին կոչ ուղղեց ճնշում գործադրելու Իսրայէլի վրայ, որպէսզի ան վերջ տայ Լիբանանի դէմ կատարած օդային խախտումներուն: Սուրիացի գաղթականներու առնչութեամբ Քասեմի խօսքով մեծ պետութիւնները պէտք է կրեն՝ Լիբանանի մէջ սուրիացի գաղթականներու հարցով իրենց բոլոր պատասխանատուութիւնները:

### Ռաաի Իրաքեան Քիւրտիստան Կ՚այցելէ

Մարոնիներու կարտինալ Պըշարա Ռաաի պատրիարքը ուղղուեցաւ Իրաքեան Քիւրտիստանի Իրպիլ մայրաքաղաքը հովուապետական այցելութեամբ: Ան կը գլխաւորէ եպիսկոպոսներու պատուիրակութիւնը: Իրպիլի մէջ կատարուած առաջին յայտարարութեամբ մէջ Ռաաի նշեց, որ Լիբանանի մէջ քաղաքական ճախողութեան եւ ընկճուածութեան գլխաւոր պատճառը՝ նախագահի ընտրութեան դիտումնաւոր խոչընդոտումն է: Ան շնորհակալութիւն յայտնեց քրիստոնեաները ընդունելու Իրաքեան Քիւրտիստանի ղեկավարութեան դիրքորոշումին համար, սակայն կոչ ուղղեց բոլոր քրիստոնեաներուն չհեռանալ Իրաքի իրենց հողերէն, որովհետեւ իրենք այնտեղ քաղաքակրթութիւն կառուցած են մահմետականներուն հետ միասին: Ռաաի ցաւ յայտնեց, որ միջազգային յարձակումները չեն կրցած կործանել Իսլամական պետութիւն կազմակերպութիւնը:

**Շրջանային Լուրեր**

## Իրաքեան Բանակը Կը Հարուածէ Տաէշը

Իրաքի պաշտպանութեան նախարարութիւնը նշեց, որ Իսլամական պետութիւն կազմակերպութեան աւելի քան 124 զինեալներ սպաննուած եւ անոնց պատկանող 8 մեքենաներ կործանած են Իրաքի երեք շրջաններու մէջ տեղի ունեցած բախումներու եւ յարձակումներու ընթացքին: Ըստ նախարարութեան օդուժը մեծ յարձակում գործած է Տաէշի դատարանին վրայ Ռամատիի մէջ, կործանելով նաեւ զինամթերանոց մը:

## Թուրքիոյ Ընդդիմադիրները Կը Փորձեն Կառավարութիւն Կազմել

Թրքական լրատուամիջոցներ հաղորդեցին, որ ընդդիմադիր գլխաւոր կուսակցութիւնները կը փորձեն կառավարական այնպիսի համաձայնութիւն մը կայացնել, ըստ որուն իշխանութենէն դուրս կը մնայ Արդարութիւն եւ Զարգացում կուսակցութիւնը, որ այժմ կը գտնուի իշխանութեան ղեկին վրայ գործող կառավարութեան մէջ: Ընդդիմադիր կազմակերպութիւնները մասնաւորաբար կ'առաջարկեն վարչապետութեան պաշտօնը հերթաբար ստանձնել, որպէսզի վերջնական համաձայնութեան յանգին եւ դուրս ձգեն Էրտողանի ու Տաւուտօղլուի գլխաւորած կուսակցութիւնը:

## Իրանի Հիւլէականի Հարցով Բանակցութիւններու Շարունակում

Ռուսիոյ փոխ արտաքին գործոց նախարարին համաձայն, Իրանի հիւլէականի հարցով բանակցութիւնները պիտի շարունակուին Յունիս 25ին: Նախարարը նաեւ նշեց, որ կը սպասեն վերջնական համաձայնութիւն մը գոյացնել մինչեւ տարեվերջ՝ եթէ բոլոր կողմերը բարի կամք դրսեւորեն: Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութիւնը նախապէս նշած էր, որ Իրան տակաւին կը զօրակցի ահաբեկչութեան:

Իսկ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին դիտել տուաւ, որ Իրանի հիւլէական համաձայնութիւնը կրնայ շուտով կնքուիլ: Փութին խօսեցաւ երկրին տնտեսական կացութեան մասին եւ նշեց, որ տնտեսական անկումի մասին կանխատեսումները ճշգրիտ չեն: Անոր խօսքով Ռուսիոյ կառավարութիւնը չէ թոյլատրած, որ գործազրկութեան թիւը 5,8ը սահմանէն բարձրանայ:

**Լուրեր Արաբական Աշխարհէն**

## Եմէնի Եւ Սէուտական Արաբիոյ Սահմանին Վրայ Բախումներ

Սէուտական Արաբիոյ սահմանային գօտիին վրայ բախումները շարունակուեցան Հուսի եմէնցիներու եւ սէուտական ուժերու միջեւ: Տեղեկութիւններ նշեցին, որ ընդհարումներ տեղի ունեցած են սէուտական հարաւային Ժիզան գաւառի սահմաններուն մօտ: ՄԱԿի ընդհանուր քարտուղարի բանբերը նշեց, որ առնուազն 12,9 միլիոն եմէնցիներ բաւարար սնունդ չեն ստանար:

## Բողոքի Հաւաքներ Եգիպտոսի Մէջ

Թուրքիոյ «Անատոլու» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Գահիրէի եւ այլ քաղաքներու մէջ տեղի ունեցած են բողոքի հաւաքներ, դատապարտելու համար Եգիպտոսի նախկին նախագահ Մուհամմատ Մուրսիի դէմ հրապարակուած եգիպտական դատարաններու մահուան դատավճիռները: Նշենք, որ Եգիպտոսի նախկին նախագահը, որ Իսլամ եղբայրներ կազմակերպութենէն էր, Թուրքիոյ բացարձակ նեցակցութիւնը կը վայելէր:

**Հայրենի Լուրեր**

## ՆԱԹՕ-ն Կ՚աջակցի ԵԱՀԿ Մինսքի Խումբին

ՆԱԹՕ-ն որեւէ յստակ դեր չէ ստանձնած ԼՂ հակամարտութեան կարգաւորման ուղղութեամբ, սակայն ընդունելով կողմերուն համար անվտանգութեան առաջնահերթութիւնը՝ ՆԱԹՕ-ի դիքրորոշումը կը շարունակէ մնալ անփոփոխ: Հիւսիսատլանտեան դաշինքը կը շարունակէ աջակցիլ ԵԱՀԿ Մինսքի խումբին: «Արմէնփրես»ի փոխանցմամբ՝ ՆԱԹՕ-ի խորհրդարանական վեհաժողովի Rose Rorh սեմինարի ժամանակ նման դիրքորոշում յայտնեց ՆԱԹՕ-ի կեդրոնակայանի Եւրոատլանտեան ընդելուզման եւ գործընկերութեան գծով աւագ փորձագէտ Շթեֆան Էլկերսման:

«ԵԱՀԿ Մինսքի խումբը ունի օգտակար դերակատարութիւն ԼՂ հակամարտութեան կարգաւորման համար», ըսաւ ան: Էլկերսմայի խօսքերով, ՆԱԹՕ-ն Հարաւային Կովկասի պետութիւններու հետ ունի համագործակցութիւն, որ յենած է չորս սիւնի վրայ՝ երկիրներու աջակցութիւն, կրթական բարեփոխումներու իրականացում պաշտպանական ոլորտին, հաշւետուողականութիւն եւ թափանցիկութիւն եւ, ի հարկէ, դիւանագիտութիւն», ըսաւ Էլկերսման:

Թէպէտ համագործակցութիւնը երեք երկիրներու հետ տարբեր մակարդակներու վրայ է, սակայն փորձագէտը յոյս յայտնեց, որ ՆԱԹՕ-ի եւ Հարաւային Կովկասի երկիրներու միջեւ պիտի շարունակուին գործընկերային յարաբերութիւնները առանց դանդաղելու:

Երեւանի մէջ ՆԱԹՕ-ի խորհրդարանական վեհաժողովի եւ ՀՀ ԱԺ համագործակցութեամբ՝ Յունիս 18-20-ին տեղի ունեցաւ «Անվտանգու-



թիւնն ու կայունութիւնը Հարաւային Կովկասի մէջ. տեւական խաղաղութեան խթանումը տարածաշրջանի մէջ» խորագիրով Ռոուզ Ռոթ 89-րդ սեմինարը: Սեմինարի առանցքին են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են Հայաստանի համագործակցութիւնը եւրոատլանտեան համայնքին հետ, միջնորդութեան դերը Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան, բարեվարքութեան հաստատումը իբրեւ Հայաստանի պաշտպանական բարեփոխումներու մաս, ինչպէս նաեւ ՆԱԹՕ-ի գործընկերութիւնը Հարաւային Կովկասի մէջ:

## Գերմանիոյ 12 Քաղաքներու Քաղաքապետները Այցելած Են Ծիծեռնակաբերդի Յուշահամալիր

Գերմանիոյ Հեսսենի երկրամասին մէջ ՀՀ պատուաւոր հիւպատոս Պրայան Սթիվըն Ֆերայի նախաձեռնութեամբ եւ գլխաւորութեամբ՝ Երեւան ժամանած է Գերմանիոյ Դաշնային




Հանրապետութեան 12 քաղաքներու քաղաքապետներէ կազմուած ֆութպոլի հաւաքականը, որ ընկերական հանդիպում պիտի ունենայ Երեւանի քաղաքապետարանի խումբին հետ:

Երեւանի քաղաքապետարանի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութեան փոխանցմամբ՝ Երեւանի քաղաքապետի տեղակալ Դաւիթ Օհանեանի ուղեկցութեամբ քաղաքապետները այցելած են Ծիծեռնակաբերդի յուշահամալիր՝ յարգանքի տուրք մատուցելու Հայոց Ցեղասպանութեան մէկուկէս միլիոն սուրբ նահատակներու յիշատակին:

Հիւրերը ծաղիկներ զետեղած են անմար կրակի մօտ, այնուհետեւ այցելած Հայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկ, ծանօթացած են փաստագրական ցուցադրութեան, ապա գրառում կատարած պատուաւոր հիւրերու յուշամատեանին մէջ:

## Նախագահը Ներկայ Գտնուած Է «Վիքիմետիա Հայաստան» Գրասենեակի Բացման եւ Այցելած «Միր» Հեռուստաընկերութիւն

Նախագահ Սերժ Սարգսեան ներկայ գտնուած է «Վիքիմետիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպութեան գրասենեակի բացումին:

ՀՀ նախագահի աշխատակազմի հասարակայնութեան եւ տեղեկատուութեան միջոցներու հետ կապերու վարչութեան փոխանցմամբ՝ ՀՀ նախագահը այցելած է գրասենեակ, ծանօթացած է «Վիքիմետիա Հայաստան»ի գործունէութեան եւ յառաջիկայ ծրագիրներուն:

Նախագահին ներկայացուցած են, որ որպէս «Վիքիմետիա» հիմնադրամի հայաստանեան մասնաճիւղ հիմնադրուած «Վիքիմետիա Հայաստան»ի նպատակն է՝ խթանել վիքի նախագիծերու տարածումը եւ զարգացումը Հայաստանի ու տարածաշրջանի մէջ, հանրայնացնել ազատ գիտելիքի գաղափարը:

Գրասենեակի ժողովասրահին մէջ Սերժ Սարգսեան մասնակցած է Հայաստանի մէջ վիքի նախագիծերու զարգացման վերաբերող հարցերու քննարկման, որուն մասնակցած են նաեւ ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարար Արմէն Աշոտեանը, ՀՀ մշակոյթի նախարար Յասմիկ Պօղոսեանը, «Ինթելեկթուալ Ռենեսանս» հիմնադրամի տնօրէն Յակոբ Յակոբեանը, հիմնադիր Արթուր Ջանիբեկեանը, «Վիքիմետիա Հայաստան» ՀԿ նախագահ Սուսաննա Մկրտչեանը, «Վիքիմետիա» հիմնադրամի խորհուրդի նախագահ Եան Պարթ տէ Վրիտը, հիմնադրամի կրանտներու բաժնի եւ միջազգային հիւսիսային համագործակցութեան ղեկավար Ասաֆ Պարտովը, «Վիքիփետիա» կրթական ծրագրի ղեկավար Աննա Կովալը, «Եւրոպեանա Գլամ» վիքի ծրագրի համակարգող Ուիլիըմ Վիաթը, «Ինթելեկթուալ Վերածնունդ» հիմնադրամի տնօրէն Մարինա Սուլթանեանը եւ ծրագիրներու համակարգող Արմէն Մարտիրոսեանը:

«Վիքիմետիա Հայաստան» կազմակերպութեան գրասենեակի բացման արարողութեան ծիրէն ներս մասնակիցները դիտած են նաեւ «Ինթելեկթուալ Ռենեսանս» հիմնադրամի եւ «Վիքիմետիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպութեան համագործակցութեան արդիւնքները ներկայացնող տեսանիւթ:



Հանրապետութեան նախագահը «Վիքիմետիա Հայաստան»ի գրասենեակէն ետք այցելած է «Միր» միջպետական հեռուստառատիօ ընկերութեան ազգային մասնաճիւղ, որուն Յունիս 18-ին ՀՀ կառավարութեան որոշմամբ յատկացուած է 60 միլիոն դրամ՝ Երեւանի մէջ տեղակայուած երկրային արբանեակային կայանի վերազինման համար:

Սերժ Սարգսեան շրջայցի ժամանակ ծանօթացած է ընկերութեան տեխնիկական հնարաւորութիւններուն, վերազինման ընթացքին եւ այդ ուղղութեամբ յառաջիկայ ընելիքներուն, զրուցած մասնաճիւղի աշխատակիցներուն հետ: Նախագահին ներկայացուած են «Միր» հեռուստառատիօ ընկերութեան ազգային մասնաճիւղի կողմէ պատրաստուող արտադրանքը, անոր ծաւալները, ստեղծագործական խումբի կողմէ պատրաստուող հաղորդումները, որոնք Հայաստանը կը ներկայացնեն մօտ 162 միլիոն դիտող ունեցող «Միր»ի լսարանին:

# Ղազարոս Աղայեանի Մասին Վկայութիւն

Փառահեղ ծերունի էր. բարձրահասակ, թիկնեղ եւ լայնալանջ: Անոր հպարտ լանջին վրայ կ'իջնէր գեղեցիկ, ճերմակ մօրուքը՝ ծածկելով անոր կորովի վիզը: Անոր գլուխը միշտ հպարտ էր, վե՛ր: Կը նայէր տիրական հայեացքով, հին նահապետի եւ կամ նախարարի մը պէս, բայց ամէն հանդիպողի կը նայէր մտերմաբար, երբեմն իբր մեծ եղբայր կամ հայր եւ երբեմն որպէս ուսուցիչ: Անոր մեծ ու թուխ աչքերը միշտ մշտավառ էին, լեցուած կայծերով, որ կարծես կախարդական, որ կը ստիպէ անտարբեր չնայիլ իրեն: Այդ է պատճառը թերեւս, որ ծանօթանծանօթ կը յարգէին զինք:

Աղայեան ընդունելով բոլոր բարեւները, կը քալէր հանդարտ ու խոհուն: Այնպէս կը թուէր թէ մտածումներ ու հոգեր կը զբաղեցնէին զինք: Առտուները, երբ մարդիկ խումբ խումբ կը շտապէին իրենց գործին հասնելու, Աղայեանը ձեռքերը մէջքին դրած կամ որեւէ իր բռնած, հանդարտ կը քալէր փողոցի մայթէն, ուշադրութեամբ եւ հետաքրքրութեամբ նայելով անցորդներուն եւ ընդունելով անոնց բարեւները: Յաճախ երբ ան այս կամ այն ծանօթը կեցնելով կը խօսէր անոր հետ, ինծի միշտ կը թուար, թէ կը հարցնէ.

Ամէն բան կարգի՞ն է ձեր մօտ: Ժողովուրդին աղէտ մը, վնաս մը պատահած չէ՞…:

Պատասխանը գոհացուցիչ ըլլալու պարագային անոր դէմքը կը պայծառանար եւ աչքերը կը փայլէին, իսկ բացասականի ժամանակ անոնք կը դառնային տխուր ու խոհուն:

Առաջին անգամ ես անոր խօսքը լսեցի ժողովի մը ընթացքին: Ոտքի ելաւ ու պատկառելի եւ խրոխտ ձայնով սկսաւ խօսիլ: Կեանքիս մէջ այդպէս խօսող չէի տեսած բնաւ եւ բնաւ ալ չտեսայ: Կը կարծէք խօսքս կը վերաբերի անոր հռետորութեան կամ պերճախօսութեան վրա՞յ: Ամենեւին: Աղայեանը հռետոր չէր. Ան կը խօսէր ուրիշ ձեւով մը: Ով որ զինք տեսնէր, կ'ըսէր որ ան ուսուցիչ է եւ այդ պահուն կը խօսի իր աշակերտներուն հետ՝ անառարկելի հեղինակութեամբ, իր իւրաքանչիւր բառը ընդգծելով, որպէսզի ունկնդիրները զինք սխալ չհասկնան: Ան մատով օդին մէջ ստորակէտ, միջակէտ եւ վերջակէտ կը գծէր: Անոր մանկավարժական շարժումները այնքան մշակուած էին, որ ամէն մարդ կը զգար, թէ խօսակցութեան պահուն ուր բութ կամ ստորակէտ կը դնէ:

Մանկավարժութիւնը իր կնիքը այնպէս դրած էր Աղայեանի վրայ, որ անոր վերաբերմունքէն եւ հոգեբանութենէն կը զգային թէ ան մնացած էր ուսուցիչ: Բոլորը այդպէս կ'ընդունէին զինք, որպէս լաւապէս իրազէկ ժողովուրդի կարիքներուն ու պահանջքներուն:

Երկրորդ անգամ ես զինք լսեցի աւելի մտերմիկ շրջանակի մէջ եւ դարձեալ զգացի անոր ժողովրդային հոգին եւ մեծ հեղինակութիւնը: Այս անգամ ան եկած էր «Սուրհանդակ» թերթի խմբագրատուն: Ի յայտ եկաւ որ ան եկած էր Նար-Դոսի մօտ՝ շնորհաւորելու անոր նոր «Պայքարը» վէպը: Անոր մտերմիկ խօսակցութեան մէջ ես դարձեալ կը զգայի ուսուցչական վերաբերմունքը, որ իր պարտքը կը համարէ ուրախանալ աշակերտի առաջդիմութեան համար եւ միշտ քաջալերել լաւը:

Մի՛ ամչնաք մեր լեզուէն: Փողոցէն անցած ժամանակ բարձր խօսեցէք, որ ամէն օտարներն ալ զգան, թէ կայ հայ ժողովուրդ եւ հայոց լեզու, որ ոչ մէկ բանով պակաս է այլ լեզուներէ… լա՛ւ ապրեցէ՛ք, լաւ բաներ գրեցէք ու տպեցէք,- ըսաւ դասարանէն դուրս եկող ուսուցիչի մը պէս:

Ու այսպիսով խմբագրատունէն գնաց պարթեւահասակ, բարձրագլուխ ու այնպէս զուարթ մթնոլորտով, որ ես կարծեցի թէ ան երկար ժամանակ կը մնայ այսպէս: Գնաց, իր ետին ձգելով հիացմունք եւ յարգանք: Բայց քանի մը օրեր ետք լսեցինք անոր մահը: Առաջին անգամ այդ մէկը անհաւատալի թուաց ինծի: Ինչպէ՞ս կրնար մեռնիլ այդ գեղեցիկ կազմուածքով մարդը: Սակայն ան մեռաւ գեղեցիկ մահով, ինչպէս հերոսը կը մեռնի պայքարի ընթացքին, այն պահուն՝ երբ հակառակորդի դէմ գրած յօդուածը գրպանը դրած կ'ուղղուէր խմբագրատուն: Մեռաւ այն փողոցին մէջ, ուր ան կը հսկէր հայոց կեանքին, լեզուին եւ գրականութեան:

**ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ**
«Յուշերու Գիրք»

## ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

Ծիծեռնակը բոյն էր շինում,
Ե՛ւ շինում էր , ե՛ւ երգում,
Ամէն մի շիւղ կպցնելիս՝
Առաջուայ բոյնն էր յիշում:

Մէկ անգամ էր նա բոյն շինել
Եւ շատ անգամ կարկատել,
Բայց այս անգամ
վերադարձին
Բոյնն աւերակ էր գտել:

Այժմ նորից բոյն էր շինում,
Ե՛ւ շինում էր , ե՛ւ երգում,
Ամէն մի շիւղ կպցնելիս՝
Առաջուայ բոյնն էր յիշում:

Նա յիշում էր անցած տարին
Իր սնուցած ձագերին,
Որոնց ճամփին յափշտակեց
Արիւնարբու թշնամին:

Բայց նա կրկին բոյն էր շինում,
Ե՛ւ շինում էր , ե՛ւ երգում,
Ամէն մի շիւղ կպցնելիս՝
Առաջուայ բոյնն էր յիշում:

**Ղազարոս Աղայեան**

# «Կամար» Պարբերականի 23րդ Թիւը

«Կամար» գրական-մշակութային անկախ այս պարբերականը, գլխաւոր խմբագիր Ժիրայր Դանիէլեան, կը հրատարակուի Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան մեկենասութեամբ:

Այս համարին խմբագրականը պարագրած է վաստակաւոր մտաւորական դոկտ. Երուանդ Յ. Քասունի՝ օգտագործելով «Յիշելու Եւ Պահանջելու Համար» խորագիրը, ուր ըսած է.- «Պիտի յիշել Ցեղասպանութիւնը… բայց Ցեղասպանութիւնը յիշողութեան մէջ ունենալու եւ յիշելու համար, նախ պիտի իմանալ եւ իմանալու համար՝ սորվիլ: Պիտի սորվիլ եւ իմանալ որպէս գիտութիւն, որպէսզի «Կը պահանջեմ»ը իր հերթին իմաստաւորուի ու տարրողութենանայ:

Ի՞նչ է պահանջուածը:

Հայ ժողովուրդի դէմ գործադրուած Ցեղասպանութեան 50 ամեակին քաղաքամայր Երեւանը բարձրաղաղակեց մէկ մարդու պէս.- Մեր հողերը, մեր հողերը…:

Առաջին պոռթկումով պահանջուածը կը մնայ անսակարկելին, իրաւն ու արդարը: Սրբազան եւ անսակարկելի իրաւունքով՝ թուրքին կողմէ բռնագրաւուած հայուն հայ հողն է: Ժամանակ պիտի չվատնել «Ցեղասպանութիւնը ճանչնալ», «ներողութիւն խնդրել», «հատուցում» բառերով: Մէկ ու միակ պահանջուածը՝ հայ հողը, հայուն հողը…»:

Ըսուած է պարզ ու մէկին՝ ահա թէ ի՛նչ է ողջ հայութեան ուզածը:

Կամարը իր այս թիւով կը շարունակէ Քրիստինէ Կանաչեանի յուշերը մատուցել մեզի Բարսեղ Կանաչեանի կեանքէն, հայ երաժշտութեան հոգեւին նուիրուած մարդ, որ եղած է աշակերտը մեծն Կոմիտասին:

Հիւթեղ այս նիւթը իր աւարտին կը հասնի հոս: Երանի շարունակուէր: Այլապէս ալ երանի՛ գիրքի վերածուէր:

«Կամար»ի բանաստեղծութիւններ բաժինին մէջ ահա փունջ մը երգ հայոց մեծագոյն Մատենադարանի տնօրէն՝ Հրաչեայ Թամրազեանէն:

Բերկրալի են այս երգերը.

«Խաղաղուիր սիրտ իմ, քո նոր յարկի տակ,
Ուր խաղաղւում է ամէն մի երկիւղ,
Թափառող օրն իմ փորձութեան մի տուր
Երբ երերում է աշխարհը բեկուն…

Ընդարձակ հորիզոնէ մը ընձիւղած խոհեր բանաստեղծին կողմէ: Ասոր կը հետեւի «Հանճարը» արձակը Նորայր Ադալեանին, որ մնայուն ներկայութիւն է այս պարբերականին մէջ:

Կ'երեւի Նորայր Ադալեանը իր բարկ գինին նոր կ'ուզէ մատուցել մեզի՝ մերին ապրած կեանքը երգիծանքի վերածելով, ուր «ողջ» մեռելի մը պատմութիւնը կ'ընէ իւրայատուկ ոճով մը յանգելու համար այն եզրակացութեան, թէ ապրիլը ապսուրտ է:

Բայց եթէ ապրիլը ապսուրտ ըլլար Ադալեանը կը դադրէր գրելէ:

Բանաստեղծ Խաչիկ Տէտէեանը խորամուխ կեանքի ելեւէջներուն, կ'ուզէ իր տան լուսամուտներուն փեղկերը փակել քաջ գիտնալով, որ այդ փեղկերը փակ ըլլան թէ բաց, տիեզերքի անհունութեան մէջ մարդուն կեանքը պիտի կրկնուի:

Նանոր Ինճէճիքեանին ձայնը կու գայ կործանող Հալէպէն եւ այդ իրողութեան իսկ պատճառով գուցէ դէպի իսկութիւն կը նաւէ.«Ժամանակ չկար ներթափանցելու տեսանելիէն դէպի իսկութիւն»:

Սիլվի Աբելեանը Քեսապէն կը ձայնէ իր գիւղը՝ Քէօրճիւնէն տաղերգելով, նոյնիսկ եթէ թուրքը կարենայ հոն գալ: Գիւղը հայրենիք է իրեն համար:

Քաղցրիկ Խաչատրեանի լաւատեսութիւնը գնահատելի է, երբ կը գրէ նոր տարիի մասին,- Այս նոր տարին թող որ առնի, իր հետ տանի նախորդ տարուայ կնճիռները: Սիրելի բաղձանք:

Խաչիկ Խաչէրին ձայնը Թեհրանէն կը լսենք, թէեւ հոս ներկայացուածը լոնտոնեան կեանքէն գողտրիկ պատմուածք մըն է մենակութեան ահաւորութիւնը անգոսնող: Բազմամիլիոնանոց քաղաքի մը մէջ ինքզինք մինակ զգալ: Պատմուածքին մէջ անգլիացի երիտասարդի մը հայրը կը մահանայ ծերանոցի մը մէջ ու այդ անգլիացին իր նոր ծանօթէն՝ Խաչիկէն կը խնդրէ, որ նոր տարուան օրով միասին թաղեն իր վախճանեալ հայրը: Եւ ի՞նչ՝ Թայմզ գետին վրայ նաւ մը նստելով անոր աճիւնը գետի ջուրերուն կը յանձնեն… ու անգլիացին կ'ըսէ.- Հայր, բաղձանքդ կատարեցի, շատ սիրածդ գետին յանձնեցի աճիւններդ…:

Նոր տարուան օրով թաղում: Լաւ գրուած պատմուածք մը վատ օրուան մասին:

Գառնիկ Գալստեանի քերթուածները միշտ բարեհունչ, հաճելի են.

Էլ ինչ երգեմ ես, երբ շնչիս նստել
Կոտրել է վիշտը ե՛ւ սիրտ ե՛ւ քնար
Երբ Հայաստանն է յայտնուել այստեղ
Օտար մայթերին մեռնելու համար…:

Համբիկ Մարտիրոսեանը կը շարունակէ իր պատանեկութեան պատմութիւնը յուզիչ պատմուածքներու վերածել, այս անգամ «Փոքրիկ ներկարարը» վերնագիրին տակ, մնալով «մանկութիւն չունեցող» մարդ:

Մերօրեայ գազանանոց աշխարհը Նոնա Պօղոսեանին գրել կու տայ.-

Քամիները բոլոր սկսուել են վաղուց,
Աշնան նրբանցքներում,
Որ երջանկութիւնը չորացած տերեւ է….

Յաջորդ գրութիւնը արաբ յայտնի գրողէ մը՝ Ապտուլ Ռաման Մունիֆէն, թարգմանուած 15 լեզուներու: Հոս ներկայացուածը Հալէպը չթողուլ որոշած Հուրի Ազէզեանի կատարած թարգմանութիւնն է:

Մեզի տրուածը վէպին մէկ հատուածն է, ուր կան նաեւ հայ հերոսներ:

Յարութիւն Իսկահատեանը իր հարազատ նիւթին մէջ է. թող իր գրածին վերնագիրը խօսի.«Մեծ Եղեռնէն վերապրողի մը վկայութիւնները օտար գրականութեան մէջ»: Խօսքը Քէյ Մուրատեանի վէպին մասին է, որ որպէս խորագիր ունի «Մօրս Ձայնը»: Այդ ձայնը խեղդուած է Ցեղասպանութեան օրերուն՝ երբ 1901ին Հաճըն ծնած Ֆլորա Մունուշեանը գեհենային ամիսներ կ'ապրի:

Գեղանկարիչ, գեղանկարչագէտ Ալեքսան Պէրէճիքեանը կը խօսի «Էմիլ Պէրնարի Ոդիսականը» նիւթին շուրջ, գեղանկարիչ մը որ տասնամեակներով կը հալածուի, բայց վերջապէս «Արդարութիւնը կը յաղթանակէ», գեղանկարիչին գործերը Փարիզի մէջ կը ցուցադրուին 2014ին:

Հալածանք եւ խափանում, ուրեմն լոյսի քաղաքին մէջ ալ նման մութ գործեր կը պատահին: Պէրէճիքեան Պէրնարէն հոս ներկայացուցած է չորս գեղանկար իրմէ եկած մեկնաբանութիւններով:

Սիրոյ պատմութիւն մը եւս կայ այստեղ ընդմէջ Էմիլ Պէրնարի եւ Արմէնուհի Օհանեանի, որ երկար չէ տեւած, հայուհին չքնաղ, ունի բարձր ուսում, կը տիրապետէ լեզուներու, վարպետ գրող եւ պարուհի է միաժամանակ, որ միջոց մը Պէրնարին համար այս հայուհին «ինքնաքաղաքակրթութիւնն էր, իր բոլոր երեւոյթներով Արեւելքի եւ Արեւմուքի միացումը»: Այս հիացումը կ'ունենայ միայն երկու տարուան կեանք:

Արամ Սեփեթճեանը հայ կեանքին հետամուտ՝ հոս կը ներկայացնէ Էդուարդ Իսաբեկեան գեղանկարիչը անոր ծննդեան 100 ամեակին առիթով: Յօդուածին առընթեր ներկայացուած են հինգ վերապրում:

Թորոս Թորանեանին նիւթը Կոստան Զարեանն է, մեր մեծագոյն գրողներէն, այս իսկային ծննդեան 130 ամեակին առիթով:

Վահէ Մելեմեթճեան կը խօսի «Չարենցի Առասպելին» մասին.-«Ան կեանք մտաւ խենթ երազներով, անյայտ հորիզոններու կախարդանքով եւ որոնումներու բացառիկ կիրքով, բայց չէր գիտեր որ իրեն պահուած էին այլ անակնկալներ»: Հեղինակը կու տայ Չարենցի փոթորկոտ կեանքին ելեւէջները:

Դարձեալ ձայն մը քաղցրահունչ փլատակներու կեդրոն Հալէպէն.- Էօժէնի Դանիէլեանն է, որ կը խօսի մեծն Սիմոն Սիմոնեան ուսուցիչին եւ գրողին մասին՝ անոր ծննդեան 100 ամեակին առիթով:

«Այդ դուք էք վիթխարի էութիւն Պարոն Սիմոնեան» կը հետեւին հիացողի, արդարօրէն հիացողի զեղումներ Սիմոնեանի մասին: Հոս է նաեւ Պետիկ Հերկելեան վաղամեռիկ բանաստեղծը յօդուածով մը՝ Աբրահամ Ալիքեանի գրիչէն: Խմբագրութիւնը տուած է կենսագրականը Պետիկ Հերկելեան քերթողին:

Պարոյր Յ. Աղպաշեան հանգամանօրէն կ'անդրադառնայ Ալպէր Իսայեանի 700 էջ ընդգրկող «Սեւ Գիրք»ին: Գիրքին անունն իսկ՝ »Սեւ Գիրք» յայտնօրէն կը խօսի Հայոց Ցեղասպանութեան ահաւորութենէն:

Սարգիս Վահագնի նիւթը կը կոչուի «Լինելութեան Բանաստեղծը», որ մանրամասնօրէն կը վերաբերի Թամարա Յովհաննիսեանի քերթողական բարձրագոյն արժանիքին:

«Կամար» չորս էջ նուիրած է հանգուցեալ մեծ բարերար Կարպիս Նազարեանին, թուելով «Կարպիս Լ. Նազարեան հիմնադրամի հրատարակած 19 հատորները: Այս մասին ոգեշունչ յօդուած հրատարակած են Պարոյր Աղպաշեանն ու Ժիրայր Դանիէլեանը: Տրուած են լուսանկարներ:

«Կամար»ի այս թիւին վերջին էջերը նուիրուած են պարբերականի հիմնադիր խմբագիրներէն նորոգ հանգուցեալ Պեպօ Սիմոնեան քնարագիրին, դաստիարակին, կուսակցական գործիչին: Կատարելով արդարութիւն Պեպօ Սիմոնեան բարեհամբոյր բանաստեղծին մասին, յօդուածներ ստորագրած են Պարոյր Աղպաշեան, Ժիրայր Դանիէլեան, Արամ Սեփեթճեան եւ Խաչիկ Տէտէեան: Իսկ Սարգիս Կիրակոսեան քերթողը իր մէկ բանաստեղծութիւնը նուիրած է մեկնող իր գրչեղբօր՝ Պեպօ Սիմոնեանին:

«Կամար»ը կը շարունակէ իր անունը իրաւի՛ վերածել՝ աշխարհի բոլոր կողմերուն մէջ ապրող հայ գրողները կամարելով անկախ պարբերականի էջերուն: Թող «Կամար»ին կամարումը ըլլայ շարունակելի:

**ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՑԵԱԼԷՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՅՍՕՐ

### ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ



**Մեր թուականէն 104 տարիներ առաջ՝ 1911ին Թիֆլիսի մէջ մահացած է հայ գրող, մանկավարժ եւ հրապարակախօս Ղազարոս Աղայեան:**

**Ղ. Աղայեան ծնած է 16 Ապրիլ 1840ին, Վրաստան: Իր նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի Շամշուլտա գիւղին մէջ՝ Տէր Պետրոս Քահանայի մօտ: 1853ին ընդունուած է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը, ուր ուսնած է մէկ տարի, այնուհետեւ իր գիտելիքները ամբողջացնելով ինքնակրթութեամբ:**

**Ղ. Աղայեան որպէս գրաշար աշխատած է Թիֆլիսի, Մոսկուայի եւ Սանկտ Պետերզպուրկի մէջ: 1867ին եղած է Էջմիածնի տպարանի կառավարիչ: 1869-1870 տարիներուն խմբագրած է «Արարատ» ամսագիրը: Ուսուցչութիւն ըրած է Ախալցխայի, Ալեքսանդրապոլի, Երեւանի եւ Շուշիի դպրոցներուն մէջ: Երկար տարիներ աշխատակցած է «Փորձ» հանդէսի խմբագրութեան մէջ որպէս քարտուղար, միաժամանակ խմբագրելով «Աղբիւր» մանկական պատկերազարդ ամսագիրը:**

**Ղ. Աղայեան Հնչակեան կուսակցութեան անդամ ըլլալու մեղադրանքով աքսորուած է Նոր Նախիջեւան եւ ապա Ղրիմ: Այնուհետեւ իր կեանքը ապրած է ցարական իշխանութիւններու հսկողութեան տակ: 1902ի Մայիսին տօնուած է Աղայեանի գրական գործունէութեան 40 ամեակը:**

**Ղ. Աղայեանի առաջին բանաստեղծութիւնը լոյս տեսած է 1862ին «Մեղու Հայաստանի» լրագիրին մէջ: Գրած է մանկական բանաստեղծութիւններ, հեքեաթներ, զրոյցներ եւ պատմուածքներ:**

**Ղ. Աղայեան հայ իրականութեան մէջ յայտնի է որպէս մանկավարժ Հայ մանկավարժութեան մէջ Աղայեան կը ներկայանայ որպէս մանկավարժութեան տեսաբան: Գրած է մանկավարժական բազմաթիւ աշխատութիւններ: Հրատարակած է «Խորհրդածութիւն դաստիարակութեան Վերաբերեալ» յօդուածաշարքը «Արարատ» ամսագիրի մէջ: Առաւելաբար ան զբաղած է դպրոցական ուսուցման հարցերով եւ մշակած է մայրենի լեզուի ուսուցման ու գրագիտութեան մեթոտներ:**

**Ղ. Աղայեանի գործերէն են «Անտառի Մանուկը», «Վաճառականի Խիղճը», «Եղեգնուհի», «Մանուկ-Խան», «Վիշապին Յաղթողը» եւ այլ բազմաթիւ աշխատութիւններ:**

## ՑԱՒԱԿՑԱԳԻՐ

### Ափսո՛ս, հազար ափսոս…

Կեանքից հեռացաւ մեր ժողովրդի բացառիկ զաւակ, պայծառ անհատականութիւն, հայկական Սփիւռքի եւ հայ ազգի մեծերից մէկը՝ Քըրք Քըրքորեանը:

Ապրելով դժուար, զրկանքներով լի մանկութիւն եւ պատանեկութիւն, նա կարողացաւ իր հայկական ոգու եւ անկոտրում կամքի շնորհիւ հասնել անուրանալի ձեռքբերումների, հասնել փառքի գագաթնակէտին: Նա իրօք դարձաւ կենդանի լեգենդ, դարձաւ խարիսխ ու հենման կէտ՝ Հայաստանին պատուհասած ահեղ երկրաշարժի, շրջափակման ու տնտեսական ճգնաժամի դժուար տարիներին: Նրա գործունեայ եւ հեռատես միտքը ստեղծեց «Լինսի» հիմնադրամը, եւ Հայաստանում կեանքի կոչուեցին բազմաթիւ ծրագրեր՝ վերանորոգուեցին ալթոճանապարհներ, վերակառուցուեցին մշակութային հաստատութիւններ, դպրոցներ ու մանկապարտէզներ: Սակայն համեստ ու լռակեաց մեր հայրենակիցը երբե՛ք չհամաձայնեց իր անունով կոչել որեւէ փողոց, դպրոց կամ մշակութային օճախ, ինչը ցանկանում էին անել հայաստանցիները՝ որպէս երախտագիտութեան եւ սիրոյ արտայայտութիւն:

Անդառնալի է կորուստը, բայց եւ կասկած չկայ, որ այն ամէնը, ինչ արեց Քըրք Քըրքորեանը Հայաստանի եւ հայ ժողովրդի համար՝ դարձաւ նրա անմահութեան խորհրդանիշը: Նրա անունը ոսկէ տառերով գրուեց հայոց պատմութեան մէջ՝ այնտեղից երբե՛ք, երբե՛ք դուրս չգալու պայմանով: Ապրելու իր կերպով նա աշխարհին, մարդկանց, հայութեանը պատգամեց, որ՝ «գործն է անմահ, լաւ իմացէք»:

Թող լոյս իջնի նրա հեռաւոր շիրմին:

**ՀՀ Սփիւռքի Նախարարութիւն**

# Գ Ա Ղ Ո Ւ Թ Ա Հ Ա Յ   Կ Ե Ա Ն Ք

ՌԱԿ-ի Լուրեր

## «Սփիւռքահայ Տեղեկատուութեան Դաշտը Անցումային Հանգրուանին Տպագիրէն Թուայնացում»

Հովանաւորութեամբ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան եւ կազմակերպութեամբ՝ «ՌԱԿ ՄԱՄՈՒԼ»ի, 17 Յունիս 2015ի երեկոյեան ժամը 7:30-ին Թէքէեան Կեդրոնի «Գերսամ Ահարոնեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Սփիւռքահայ Տեղեկատուութեան Դաշտը Անցումային Հանգրուանին Տպագիրէն Թուայնացում» խորագրով «Կլոր Սեղան»ի շուրջ հրապարակային հանդիպում մը:

Ներկայ էին ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառին ներկայացուցիչը՝ Հոգշ. Տ. Պետրոս Վրդ. Մանուէլեան, Գերապատիւ Տ. Ներսէս Պետրոս 19-րդ Կաթողիկոս Պատրիարքի ներկայացուցիչը՝ Պրն. Սարգիս Նաճարեան, ՀՀ Լիբանանի մօտ Հիւպատոս Պրն. Աշոտ Վարդանեանը, ԹՄՄ հիմնադիրներու Մարմնի ատենապետ ընկ. Յակոբ Գասարճեանը եւ Հիմնադիրներու Մարմնի անդամներ, ՌԱԿ Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ՝ ընկ. Միքայէլ Վայէճեանը ու վարչութեան անդամներ եւ մեծ թիւով հիւրեր ու ներկաներ:



Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու ունկնդրութենէն ետք, «Կլոր Սեղան»ը վարող, «ՌԱԿ ՄԱՄՈՒԼ»ի եւ «Զարթօնք»ի գլխաւոր խմբագիր ընկ. Սեւակ Յակոբեան բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ՝ շնորհակալութիւն յայտնելով բոլորին եւ «Կլոր Սեղան»ի մասնակիցներուն, այս քննարկման ներկայ ըլլալու համար:

Ապա նիւթին վերաբերող հորիզոններ բանալու համար ներկաներուն մօտ ան յիշեց Չարլզ Տարուինի մէկ նշանաւոր խօսքը, ուր ան կ՚ըսէ, թէ «Ո՛չ ամենազօրաւորը, ո՛չ ալ ամենախելացին պիտի գոյատեւէ. այլ ան, որ կարողութիւնը ունի յարմարելու նոր պայմաններուն»:



Նախքան դասախօսներու ելոյթ ունենալը Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարուհի Տիկ. Հրանոյշ Յակոբեան, տեսաերիզի ճամբով իր գնահատական ու զօրակցական խօսքը փոխանցեց՝ ըսելով. «Աշխարհը շատ արագ կը զարգանայ եւ կը փոխուի ու այս փոքրացող աշխարհի գլխաւոր դերակատարը տեղեկատուութիւնն է, որ վայրկեաններու ընթացքին կրնայ աշխարհը ոտքի հանել, ուրախացնել եւ կամ տխրեցնել»: Սփիւռքի նախարարուհին գնահատելով այս ձեռնարկը կազմակերպողները, բարի երթ մաղթեց «Կլոր Սեղան»ին (Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարուհի Հրանոյշ Յակոբեանի խօսքը կու տանք առանձին բաժինով):

Կլոր սեղանը վարող ընկ. Սեւակ Յակոբեան նախ խօսքը փոխանցեց Միչիկըն Համալսարանի Հայագիտութեան Ամպիոնի Վարիչ Դոկտ. Արա Սանճեանին, որ իր կարգին խօսելով համացանցի բերած փոփոխութիւններուն մասին ըսաւ, թէ «ըլլայ տպագիր, թուայնացած, համացանցային եւ կամ հեռարձակուող տեղեկատուութիւնը արհեստականացումի միջոցաւ եղած է այնպէս, որ ընթերցողը այլեւս կարելիութիւնը ունի լուրերը համեմատելու, նաեւ տարբեր աղբիւրներու հետեւելով գիտնալու տարբերութիւններն ու առաւելութիւնները եւ մէկ թերթը կամ կայքը միւսէն զանազանելու»: Դոկտ. Սանճեան նշեց, թէ առաւելաբար աւելի հետեւորդ կ'ունենայ այն տեղեկատուական կազմակերպութիւնը, որ առանց խտրութեան ամէն լուր կը փոխանցէ, առանց կուսակցական կամ գաղափարական սահմանագիծեր դնելու»:



**Ձախէն՝ Պրն. Շիրազ Ճէրէճեան, Պրն. Շահան Գանտահարեան, Տիկ. Անիթա Լիպեար, Ընկ. Սեւակ Յակոբեան, Դոկտ. Արա Սանճեան, Դոկտ. Անդրանիկ Տագէսեան եւ Դոկտ. Հրայր Ճէպէճեան**

Ընկ. Յակոբեան շնորհակալութիւն յայտնելէ ետք Դոկտ. Արա Սանճեանին, խօսքը փոխանցեց Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի Տնօրէն Դոկտ. Անդրանիկ Տագէսեանին, որ ներկայացնելով «Ոսկեփորիկ»ի գաղափարը ըսաւ, թէ «Այսօր կայ այնպիսի իրողութիւն մը, ուր գոյութիւն չունի կատարելապէս վստահելի կայք մը, որ իր մէջ ուսումնասիրող աշակերտը՝ անոր մէջ կարենայ գտնել իր ուսումնասիրել ուզած բոլոր նիւթերուն մասին, փոխանակ դիմելու զանազան աղբիւրներու, որոնց վստահելիութիւնը կրնայ կասկածի տակ առնուիլ»: Ան շեշտեց, որ թուայնացումը արխիւներու պահպանումէն անդին կարեւոր է նաեւ հանրութեան հասանելիութեան փոխանցելու համար:

Երրորդ դասախօսն էր Արաբական Ծոցի Աստուածաշունչի Ընկերակցութեան Ընդհանուր Քարտուղար Դոկտ. Հրայր Ճէպէճեան, որ հիմնականին մէջ խօսեցաւ արհեստագիտական արդի միջոցներով հոգեւոր գիտելիքներու փոխանցումներուն մասին: Դոկտ. Ճէպէճեան զանզանութիւն դնելով տպագիրին ու թուայնացածին միջեւ ըսաւ, թէ «Տպագիրը ստեղծած է իր մշակոյթը եւ թուայանացածը ունի իր մշակոյթը: Սակայն երկուքին հասարակ գիծը անոնց ընկալումն է ճիշդ ձեւով: Աշխարհի խոշորագոյն հարցերէն մէկը անգրագիտութիւնն է, որովհետեւ աշխարհի բնակչութեան մեծ մաս մը անգրագէտ է տակաւին եւ համացանցը իր լսատեսողական բարեմասնութեամբ աւելի դիւրին միջոց մըն է հասնելու անգրագէտ հանրութեան»:

Ապա խօսք առաւ Լիբանանի Հ.Բ.Ը.Մ.ի Վարիչ Տնօրէնուհի Տիկ. Անիթա Լիպեար, որ իր նիւթը PowerPoint-ի ներկայացման միջոցաւ խօսեցաւ համացանցի եւ ներկայ արհեստագիտութեանց առաւելութիւններուն ու ժխտական կէտերուն մասին, նկարներով ցոյց տալով մեծամեծ թուայնացած եւ տպագիր արխիւներ պահող ընկերութիւններու հրկիզումը, նկատել տալով թէ՛ տպագիրին եւ թէ՛ թուայնացածին կատարելապէս վստահելի չըլլալը: Տիկ. Լիպեար օրինակներ տուաւ ՀԲԸՄ-ի մէջ համացանցի արհեստագիտութեան միջոցաւ իր տարած աշխատանքէն եւ աւարտելով իր խօսքը ըսաւ, թէ «այսօրուան տեղեկատուութիւնը վաղուան պատմութիւնն է, որովհետեւ այդ միջոցաւ է, որ մենք հասանելի պիտի ըլլանք ապագայի սերունդներուն»:

«Ազդակ» թերթի Տնօրէն եւ Գլխաւոր Խմբագիր Պրն. Շահան Գանտահարեան, որպէս մամուլի երկարամեայ ծառայող, խօսեցաւ անցեալի եւ ներկայի տարբերութիւններուն մասին լրատուական ծիրէն ներս: Պրն. Գանտահարեան ըսաւ. «Միշտ կը հարցուի ինչու հրատարակել տպագիրը: Կան մտածողներ, որ այդ մէկը աւանդութիւնը պահելու համար է, ուրիշ խաւ մը գոյութիւն ունի, որ տպագիր կը պահանջէ, սկայն նպատակը հասանելի ըլլալն է: Թուայնացումի պատճառը որպէս արխիւ փրկելու կողքին դիւրութեամբ տարածելն է, որովհետեւ թուայնացումի պահպանումը եւս ապահով չէ: Ինչպէս որ թուղթը երկար չի կրնար դիմանալ, նոյնպէս սկաւառակները եւ կամ այլ արհեստագիտական սարքեր կրնան որոշ ժամանակ ետք դադրիլ գործածութենէ»: Ըստ Պրն. Գանտահարեանին արհեստագիտականացման հիմնական առաւելութիւններէն մէկը այն է, որ այսօր հանրութիւնը կարդալու կողքին կրնայ տեսնել եւ լսել փոխանցուող լուրին մանրամասնութիւնները, դէպքի կայացումէն առնուազն կէս ժամ ետք:

Վերջին զրուցողն էր «Մուսթաքպալ» հեռատեսիլի հայկական բաժնի եւ «Ռատիօ Սեւան»ի լրագրող ու հաղորդավար, ինչպէս նաեւ Պէյրութի «Արարատ» օրաթերթի քաղաքական էջի խմբագիր Պրն. Շիրազ Ճէրէճեան, որ յայտնեց, թէ ամէն իմաստով համացանցը դիւրացուցած է լրատուական ընկերութիւններու բոլոր գործերը, այլ երկրի մէջ պատահած տեղեկութիւն մը փոխանակ օրեր ետք ստանալու՝ ձեռք բերելու համար նոյն վայրկեանին: Պրն. Ճէրէճեան ըսաւ. «Համացանցի գոյութեամբ պէտք չունինք երկար ժամանակ սպասել լուր մը առնելու պարագային, այլ համակարգիչի դիմաց նստած կրնանք կատարել այդ մէկը: Լրատուական «համեստ» կազմակերպութիւններ նկարողներ ղրկելու կարիքը չունին առաջուայ պէս, այլ շատ դիւրութեամբ ու դէպքին ամբողջ մանրամասնութիւններով համացանցէն նկարներ կարելի է ձեռք ձգել»: Երիտասարդ լրագրողը փոխանցեց այն միտքը, որ համացանցը պատճառ դարձած է նաեւ գործազրկութեան, որովհետեւ նախապէս խմբագրատուներու մէջ պաշտօնեաներու կատարած գործերը այժմ համացանցը կը կատարէ շատ աւելի արագ միջոցներով:

Կոկիկ հիւրասիրութենէ ետք, ներկաներ եւս իրենց կարգին հարցումներ եւ միտքեր փոխանակեցին զրուկացիներուն հետ, աւելի ընդլայնելով քննարկուած նիւթերուն ծիրը նորանոր տեղեկութիւններ տալով ու քաղելով այս հրատապ հարցերուն շուրջ:

### Սփիւռքի Նախարար Դոկտ. Հրանոյշ Յակոբեանի Ողջոյնի Խօսքը Ուղղուած «ՌԱԿ Մամուլի»ի Կողմէ Կազմակերպուած «Կլոր Սեղան»ի Մասնակիցներուն եւ Հիւրերուն

Սիրելի հայրենակիցներ,

Ջերմօրէն ողջունում եմ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան հովանաւորութեամբ եւ «ՌԱԿ Մամուլի»ի կողմից կազմակերպուած «Սփիւռքահայ Տեղեկատուութիւնը Անցումային Հանգրուանին՝ Տպագիրէն Թուայնացում» կլոր սեղանի մասնակիցներին եւ հիւրերին: Վստահ եմ, որ Սփիւռքի հոգեւոր-մշակութային կեդրոնում՝ Պէյրութում իրականացուող այս ձեռնարկը դառնալու է օրինակելի փորձ՝ միւս համայնքների համար եւ նպաստելու է համահայկական տեղեկատուական դաշտի ձեւաւորմանն ու համակարգմանը, մամուլի միջոցով ստեղծուած արժէքների պահպանմանը:

Անչափ ուրախ եմ, որ նոր հանգրուանում կլոր սեղանի շուրջ հաւաքուել են սփիւռքեան տարբեր քաղաքական ուժերի, հոգեւոր, գիտական ու համահայկական կառոյցների ներկայացուցիչներ՝ արժեւորելու եւ քննարկելու հայ լրատուութեան խնդիրները՝ կապուած թուայնացման հետ:

Սփիւռքում «Ազդարարից» մինչեւ օրըստօրէ բացուող հայկական էլեկտրոնային լրատուամիջոցները եղել եւ մնում են հայապահպանութեան, Հայ Դատի, համազգային հիմնախնդիրների կոչնակները: Եւ մամուլում հրապարակուած արժէքների պահպանումը, թուայնացումն ու արխիւաւորումը լրջագոյն խնդիր են, որոնց ձեռնամուխ են եղել եւ Հայրենիքում եւ Սփիւռքում: Գործընթացը գնալով նոր թափ է ստանում՝ ի յայտ բերելով դրա դրական ու բացասական կողմերը: Սփիւռքի նախարարութեան գործունէութեան կարեւոր ուղղութիւններից մէկը եւս դարձել է աշխարհասփիւռ հայութեանն առնչուող գրականութեան, հայագիտական ուսումնասիրութիւնների, մամուլում եղած հրապարակումների թուայնացումը, համակարգումն ու արխիւացումը:

Կարծում եմ այս հարցում եւս մեր աշխատանքների կիզակէտում պէտք է լինեն Հայոց Ցեղասպանութեան ճանաչմանը, դատապարտմանն ու հետեւանքների վերացմանը, հայոց պահանջատիրութեանն առնչուող գիտական յօդուածների ու փաստավաւերագրական նիւթերի, վկայութիւնների համակարգումը, թուայնացումը, արխիւացումն ու տարածումը:

Նախարարութեան նախաձեռնութեամբ իրականացուող Լրագրողների համահայկական բոլոր համաժողովներում հայկական լրատուամիջոցները տեւական քննարկումների, վերլուծութիւնների արդիւնքում որդեգրեցին Հայ Դատը բազմակողմանիօրէն ներկայացնելու ուղղութիւն, որի շնորհիւ 100 տարի առաջ տեղի ունեցած սոսկալի ոճրագործութեան մասին Սփիւռքի եւ հայաստանեան մամուլն այնքան տեղեկատուական ու վերլուծական յօդուածներ գրեց, որ հիմա օրախնդիր է դրանց համակարգումը, թուայնացումն ու հրապարակումը:

Ուշագրաւ էր, որ Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցը ոգեկոչելու նպատակով միացան մեր երեք աւանդական կուսակցութիւնները եւ պատմութեան մէջ առաջին անգամ Ապրիլ 24-ին հայ ընթերցողի դատին ներկայացրին «Ազդակ», «Զարթօնք» եւ «Արարատ» օրաթերթերի մէկ-միասնական բացառիկ համարը:

Չափազանց կարեւորում եմ Հայագիտական թուայնացուած շտեմարանների ստեղծումը: Թերթերի տպագիր շրջանի տեղեկատուութեան, կրօնական տեղեկատուութեան արդիականացումն ու թուայնացումը: Այս իմաստով յիշատակութեան է արժանի 2014թ. Հայ Կաթողիկէ եկեղեցու եւ ՀՀ Սփիւռքի նախարարութեան համագործակցութեամբ Երեւանում տեղի ունեցած Հայ Կաթողիկէ եկեղեցու հաղորդակցութեան միջոցների 2-րդ համագումարը, որի նպատակն էր զարգացնել համագործակցութիւնը հայ համայնքներում գործող եկեղեցական ԶԼՄ-ների միջեւ եւ մշակել կ'առուցակարգեր՝ նրանց աշխատանքը քրիստոնէական եւ ազգային արժէքների տարածմանն ու պահպանմանը լաւագոյնս ծառայեցնելու համար: ՀՀ Սփիւռքի նախարարութեան կարեւորագոյն ծրագրերից ՝ է նաեւ Սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ Հայ Կաթողիկէ եկեղեցու Զմմառի եւ Մխիթարեան միաբանութիւնների ու Երեւանի Մատենադարանի միջեւ կնքուած համաձայնագրերով նախատեսուած է թուայնացնել, ամբողջացնել եւ հինգ հատորով տպագրել Միաբանութեան շուրջ 1400 հին ձեռագրերի եւ հնատիպ գրքերի մատենագրութիւնը:

2014թ. տպագրութեան է պատրաստուել 250 ձեռագրերի մատենագրութեան առաջին հատորը, իսկ յաջորդ երեք հատորների թուայնացման աշխատանքներն աւարտուած են, մատենագրութեան եւ տպագրութեան ուղղութեամբ աշխատանքները շարունակւում են:

Կարեւորելով հայ ժողովրդի՝ աշխարհով մէկ սփռուած պատմական եւ մշակութային արժէքների, այդ թւում՝ գրադարանների, թանգարանների, արխիւների նիւթերի թուայնացումը եւ տարածումը՝ մենք ստեղծեցինք էլեկտրոնային գրադարանը (www.lib.mindiaspora.am) եւ Հայկական Սփիւռքի պատմութեան վիրտուալ թանգարանը (www.armdiasporamuseum.com):

ՀՀ Սփիւռքի նախարարութիւնն իր ստեղծման առաջին իսկ օրերից ձեռնամուխ եղաւ գիտական, կրթական, տնտեսական մշակութային եւ այլ ոլորտներում առկայ ներուժի հաշուառման եւ համախմբման շտեմարանի ստեղծման աշխատանքներին, որտեղ ամէն օր եւ անընդհատ մուտքագրւում, խմբագրւում եւ ամբողջացւում են նորանոր տուեալներ սփիւռքեան կառոյցների, կազմակերպութիւնների եւ անհատների վերաբերեալ:

Աքթիւ գործում է ՀՀ ՍՆ պաշտօնական կայքը (mindiaspora.am), իսկ «Հայերն այսօր» էլ. թերթը, (www.hayernaysor.am) համահայկական տեղեկատուական դաշտում փորձում է հանդէս գալ որպէս կամուրջ:

Նախարարութիւնը սերտօրէն համագործակցում է հեռուստաընկերութիւնների եւ ռատիօընկերութիւնների հետ, ստեղծում է ֆիլմեր, տեսահոլովակներ, հաղորդաշարեր, որոնք ժողովւում եւ արխիւաւորւում են, տեղադրւում նախարարութեան կայքերում, տեղադրւում FTP համակարգում, որպէսզի օգտուեն ե՛ւ Հայաստանի եւ Սփիւռքի լրատուամիջոցները: Գործում է նախարարութեան Հայոց լեզուի հեռուստադպրոցը,

Յարգելի հայրենակիցներ,

Դարեր շարունակ գրչի մշակներն ինչպէս Հայաստանում, պատմական Հայաստանի տարածքում, այնպէս էլ Սփիւռքի բազմաթիւ համայնքներում ստեղծել եւ լոյս են ընծայել մեր ժողովրդի տարբեր հատուածների տարեգրութիւնը: Այդ ամբողջ հարստութիւնը հիմնականում այսօր խունացած թղթերի վրայ է եւ կը դատապարտուի կորստի ու մոռացութեան, եթէ մենք չմէկտեղենք մեր ուժերն ու չիրականացնենք թուայնացման եւ արխիւացման գործը:

Կարեւորում եմ յատկապէս հայ ժողովրդի հոգեւոր, բարոյական արժեհամակարգին, համաշխարհային քաղաքակրթութեան մէջ նրա գրական, մշակութային ժառանգութեանը եւ հայ ժողովրդի պատմութեանը վերաբերող հրապարակումների, յօդուածների թուայնացումը եւ այդ ուղղութեամբ ձեր ներդրած ջանքերը:

Փառք ու պատիւ բոլոր նրանց, ովքեր ձեռնամուխ են եղել դժուարին բայց անհրաժեշտ աշխատանքի իրականացմանը: Հայաստանում այդ գործն ունի պետական հոգածութիւն՝ մեծ աշխատանքներ են տարուել Մատենադարանում, Ազգային գրադարանում, ՀՀ ԳԱԱ գրադարանում, Ազգային արխիւում:

Կարծում եմ, մեր առջեւ ծառացած կարեւորագոյն խնդիրն է հզօրացնել պետական եւ համազգային տեղեկատուական ռեսուրսները, բարձրացնել դրանց օգտագործման արդիւնաւէտութիւնը, ընդլայնել հնարաւորութիւնները: Այս տեսանկիւնից նման ներկայացուցչական եւ բովանդակալից քննարկումները կարող են մեծապէս նպաստել մեր ընդհանրական գործին: 2016 թուականին կայանալիք լրագրողների 8-րդ համաժողովը կը լինի նաեւ այս ուղղութեամբ իրականացուած աշխատանքների իւրայատուկ ամփոփում

Բարի երթ եմ մաղթում կլոր սեղանի աշխատանքներին եւ մաղթում արդիւնաւէտ ու արգասաբեր ընթացք:



# Մ ա ր զ ա կ ա ն

## ՇԱԲԱԹԱՎԵՐՋԻ ԿԱՐԵՒՈՐ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Ստորեւ տեսնել շաբաթավերջի կարեւոր մրցումներու յայտագիրը (փակագիծերու մէջ խումբին դիրքը).

| **ԿԻՐԱԿԻ, 21 ՅՈՒՆԻՍ 2015** | **ԺԱՄ** |
|---|---|
| **ԱՇԽԱՐՀԻ ԿԻՆԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 1/8-ՐԴ ԱՒԱՐՏ. ՀԱՆԳՐ.** | |
| Չինաստան (2) - Քամերուն (2) | 02:30 |
| Պրազիլ (1) - Աւստրալիա (2) | 20:00 |
| Ֆրանսա (1) - Հար.Քորէա (2) | 23:00 |
| **ԵՒՐՈՊԱՅԻ ՄԻՆՉԵՒ 21 ՏԱՐԵԿԱՆ ԱԽՈՅԵԱՆ. ԱՒԱՐՏ. ԶՏՈՒՄԻ 2-ՐԴ ՀԱՆԳՐ.** | |
| Շուէտ (1) - Անգլիա (4) | 19:00 |
| Իտալիա (3) - Փորթուկալ (2) | 21:45 |
| **ՔՈՓԱ ԱՄԵՐԻՔԱՅԻ ԶՏՈՒՄԻ 3-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ** | |
| Արժանթին (1) - Ճամայքա (4) | 00:30 |
| Քոլոմպիա (4) - Փերու (1) | 22:00 |
| **ՊՐԱԶԻԼԻ ԱԽՈՅԵԱՆ. 8-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ** | |
| Կրեմիօ (7) - Փալմեյրաս (13) | 03:00 |
| Քրուզերօ (10) - Շափաքոենսէ (12) | 17:00 |
| Աթլեթիքօ Փարանենսէ (2) - Քորիթիպա (18) | 22:00 |
| **ԱՄՆ-Ի ԱԽՈՅԵԱՆ. 16-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ** | |
| Լոս Անճելըս Կալաքսի (6) - Ֆիլատելֆիա Եունիըն (7) | 05:30 |

**ՖՈՐՄԻՒԼԱ 1 ԱՒՍՏՐԻՈՅ ԿՐԱՆ ՓՐԻ**

Ժամը 15:00-էն սկսեալ Ռէտ Պուլ մրցահրապարակին վրայ:

**ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ 10-ՐԴ ՕՐ**

Ժամը 07:00-էն սկսեալ: Ծրագրի մէջ՝ նետաձգութիւն, աթլեթիզմ, ծովափի վոլիպոլ, բռնցքամարտ, հեծելարշաւ, ջրացատք, մարմնամարզութիւն, նշանաձգութիւն, թրամփոլին, վոլիպոլ, ջրագնդակ:

| **ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 22 ՅՈՒՆԻՍ 2015** | **ԺԱՄ** |
|---|---|
| **ԱՇԽԱՐՀԻ ԿԻՆԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 1/8-ՐԴ ԱՒԱՐՏ. ՀԱՆԳՐ.** | |
| Քանատա (1) - Զուիցերիա (3) | 02:30 |
| Նորվեկիա (2) - Անգլիա (2) | 00:00 |
| ԱՄՆ (1) - Քոլոմպիա (3) | 03:00 |
| **ԵՒՐՈՊԱՅԻ ՄԻՆՉԵՒ 17 ՏԱՐԵԿԱՆ ԿԻՆԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆ. ԱՒԱՐՏ. Ա.ՀԱՆԳՐ.** | |
| Անգլիա - Սպանիա | 16:00 |
| Իրլանտա - Ֆրանսա | 16:00 |
| Իսլանտա - Գերմանիա | 22:00 |
| Զուիցերիա - Նորվեկիա | 22:00 |
| **ՔՈՓԱ ԱՄԵՐԻՔԱՅԻ ԶՏՈՒՄԻ 3-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ** | |
| Պրազիլ (2) - Վենեզուելա (3) | 00:30 |

**ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ 11-ՐԴ ՕՐ**

Ժամը 07:00-էն սկսեալ: Ծրագրի մէջ՝ նետաձգութիւն, աթլեթիզմ, պատմինթոն, բռնցքամարտ, սամպօ ըմբշամարտ, նշանաձգութիւն, վոլիպոլ:

*ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽԱՂԵՐ*

## ԵՐԱՄԵԱՆ ԵՒ ՊԵՐԻԱՆԻԾԷ ՊՐՈՆԶԸ ՉԻՋԵՑԱՆ

Պաքուի մէջ շարունակուող առաջին Եւրոպական խաղերու մրցաշարքի եօթերորդ օրուան մրցումներուն Հայաստանի ներկայացուցիչ ըմբշամարտիկներ Վալոտիա Ֆրանկիւլեան, Մուսա Մուրթազալիեւ, Լեւան Պերիանիծէ եւ թաէքուոնտոյի մարզիկ Արման Երեմեան դուրս մնացին մետալներու պայքարէն: Եօթերորդ օրուան ընթացքին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.




-Նետաձգութեան մարզաձեւի կիներու խումբերու աւարտական մրցումին Իտալիան յաղթեց Պելառուսիային 5-3 սեթերու հաշիւով, իսկ երրորդ դիրքի մրցումին Ուքրանիան յաղթեց Ռուսիային 5-4 հաշիւով:

-Նետաձգութեան մարզաձեւի տղոց խումբերու աւարտական մրցումին Ուքրանիան յաղթեց Սպանիային 5-4 սեթերու հաշիւով, իսկ երրորդ դիրքի մրցումին Հոլանտան յաղթեց Ֆրանսային 5-3 հաշիւով:

-Հեծելարշաւի կիներու ճամբու ժամանակի դէմ մրցումին, հոլանտացի Էլէն Վան Տայք գրաւեց առաջին դիրքը, յառաջ անցնելով ուքրանացի եւ հոլանտացի մարզուհիները:

-Հեծելարշաւի տղոց ճամբու ժամանակի դէմ մրցումին, պելառուս Վասիլի Քիրիյենքա գրաւեց առաջին դիրքը, յառաջ անցնելով հոլանտացի եւ սպանացի մարզիկները:

-Ջրացատկի տղոց 1 մեթր շարժական տախտակ ցատկի մրցումին, ռուս Նիքիթա Շլեյխըր գրաւեց առաջին դիրքը, յառաջ անցնելով ռուս եւ բրիտանացի մարզիկները:

-Ջրացատկի կիներու 3 մեթր աշտարակ մրցումին, բրիտանացի Լոյս Թուլսըն գրաւեց առաջին դիրքը, յառաջ անցնելով ռուս եւ գերմանացի մարզուհիները:

-Մարմնամարզութեան մարզաձեւի տղոց անհատական ընդհանուր մրցումին, առաջին դիրքը գրաւեց ուքրանացի Օլէկ Վերնիայեւ շահելով 90,332 կէտ, յառաջ անցնելով ազրպէյճանցի եւ ռուս մարզիկները:

-Մարմնամարզութեան մարզաձեւի կիներու անհատական ընդհանուր մրցումին, առաջին դիրքը գրաւեց ռուս Ալիյա Մուսթաֆինա շահելով 58,566 կէտ, յառաջ անցնելով զուիցերիացի եւ հոլանտացի մարզուհիները:

-Նշանաձգութեան տղոց 50 մեթր օդի հրացան մրցումին գերմանացի Հենրի Եունկհայնըլ գրաւեց առաջին դիրքը, յառաջ անցնելով իտալացի եւ պելառուս մարզիկները:

-Նշանաձգութեան երկսեռ խումբերու թրէփ մրցումին, Սլովաքիան գրաւեց առաջին դիրքը, յառաջ անցնելով Ռուսիայէն եւ Սան Մարինոյէն:

-Թաէքուոնտօ մարզաձեւի կիներու 67 քկ դասակարգի մրցումին առաջին դիրքը գրաւեց ռուս Անասթազիա Պարիշնիքովա, յառաջ անցնելով ազրպէյճանցի, շուէտացի եւ թուրք մարզուհիները:

-Թաէքուոնտօ մարզաձեւի տղոց 80 քկ դասակարգի մրցումին առաջին դիրքը գրաւեց ազրպէյճանցի Միլատ Հարչեկանի, յառաջ անցնելով ռուս, փորթուկալցի եւ բրիտանացի մարզիկները: Այս մրցումին Հայաստանի ներկայացուցիչ Արման Երեմեան քառորդ աւարտական հանգրուանին պարտուեցաւ երկրորդ դիրքը գրաւող ռուսէն, իսկ պրոնզ մետալի մրցումին պարտուեցաւ նորվեկիացի մարզիկէ մը:

-Ըմբշամարտի ազատ մարզաձեւի տղոց 61 քկ դասակարգին մէջ առաջին դիրքը գրաւեց ռուս Ալեքսանտր Պոկոմոյեւ, յառաջ անցնելով վրացի, ատրպէյճանցի եւ ուքրանացի մարզիկները: Այս մրցումին Հայաստանի ներկայացուցիչ Վալոտիա Ֆրանկիւլեան 1/8-րդ աւարտականին պարտուեցաւ ատրպէյճանցի մարզիկէ մը:


Կազմակերպութեամբ
**«Սուրբ Գրիգոր Նարեկացի» կեդրոնին**
եւ գործակցութեամբ
**«Սուրբ Փրկիչ» եկեղեցւոյ ժողովրդապետութեան**

**Քրիստոնէականի Ամառնային Դասընթացք**
**Առ ի Պատրաստութիւն**
**«ԳԹՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՏԱՐԻ»ին**

Յունիս 23-էն Սեպտեմբեր 15 (2015)

**Ամէն Երեքշաբթի երեկոյեան ժամը 7-էն 8**
«Սուրբ Փրկիչ» եկեղեցւոյ մէջ, Պուրճ Համուտ:



**Թէքէեան Մշակութային Միութեան**
**Հիմնադիրներու Մարմնի**
Հովանաւորութեամբ

*կազմուեցաւ*
Թէքէեան Մշակութային Միութեան
նուագախումբը
**«Big Band»**

Ղեկավարութեամբ՝
երաժիշտ Վիգէն Չալեանի

*Վերոյիշեալ նուագախումբին մասնակցիլ փափաքողները կրնան դիմել հեռաձայնելով հետեւեալ թիւերուն.- 01/ 566 709 - 76/ 598 504:*

***«Big Band»ը կարիքը ունի ջութակ, թաւջութակ, տհոլ, քանոն եւ տուտուկ նուագողներու:***



AGBU

BEITEDDINE ART FESTIVAL

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Պէյթէտտին Արուեստի Փառատօնին միացեալ գործակցութեամբ եւ կազմակերպութեամբ, Շաբաթ, 8 Օգոստոս 2015-ին, Հայաստանի Պետական Ֆիլհարմոնիք նուագախումբը, խմբավարութեամբ՝ Մայսթրօ Էտուար Թոփճեանի, ելոյթ պիտի ունենայ «Պէյթէտտին Արուեստի Փառատօնին», մասնակցութեամբ՝ համաշխարհային ճանաչում ձեռք բերած հայ ջութակահար եւ աշխարհի լաւագոյն երիտասարդ երաժիշտ Սէրկէյ Խաչատրյանի:

Ուրախ ենք յայտնելու, որ Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակին նուիրուած սոյն ձեռնարկը կը վայելէ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան բարձր հովանաւորութիւնը:

Վստահ ենք, որ այս նախաձեռնութիւնը իր բարձրորակ կատարումով ոչ միայն պիտի արժանանայ լիբանանցի արուեստասէր հանրութեան քաջալերանքին եւ գնահատանքին, այլեւ համայն հայութեան հոգիներուն մէջ պիտի ջամբէ ազգային հպարտութիւն:


## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Գրիգոր եւ Թերէզ Աճիլածեաններու մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Յունիս 2015-ին Նոր Հաճնոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:




ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

**«ԽԱՉԻԿ ՊԱՊԻԿԵԱՆ» ՄԻՋ-ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆՔՆԵՐՈՒ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ԽՏԱՑԵԱԼ ՄԻԱՄԵԱՅ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ ՎԿԱՅԱԳԻՐՆԵՐՈՒ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**

Նախագահութեամբ եւ Ձեռամբ՝

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ**

Տեղի պիտի ունենայ Կիրակի, 21 Յունիս 2015-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Վեհարանի դահլիճին մէջ:



**ՍԱՐԿԱՒԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ**

*Հանդիսապետութեամբ*

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի

Կիրակի, 21 Յունիս 2015-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Ս. Պատարագի ընթացքին, սարկաւագական ձեռնադրութիւն պիտի կատարուի

Պատարագիչ եւ Ձեռնադրիչ

Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան

Սարկաւագական ձեռնադրութիւն պիտի ստանան

**Աւետիս Կիս. Սրկ. Ասայեան**
**Նարեկ Կիս. Սրկ. Յովհաննէսեան**
**Յովհաննէս Կիս. Սրկ. Սէլլումեան**
**Նորայր Կիս. Սրկ. Տալգըճեան**
**Բաբգէն Կիս. Սրկ. Չէնեան**

| | |
|---|---|
| Ս. Պատարագ | առաւօտեան ժամը 9.30 |
| Ձեռնադրութիւն | առաւօտեան ժամը 10.00 |
| Քարոզ | առաւօտեան ժամը 11.00 |

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու եկեղեցական արարողութիւններուն եւ աղօթակից դառնալու մեր սարկաւագներուն իրենց աստուածահաճոյ ծառայութեան քայլերուն մէջ:

**Տեսչութիւն Դպրեվանուց**



**Ռամկավար Ազատական Կուսակցութիւն**
**Պայքար Ակումբ (Ընկերկային Յանձնախումբ)**

**Դաշտագնացութիւն (picnic)**
**դէպի «Մունթազահ Ալ Անհար» Մէյրուպա**

Մասնակցութեամբ սիրուած երգիչ՝
**Յովիկ Թաֆրանեանի**

Ընկերակցութեամբ՝
**Յովիկ Ատուրեանի**

Տեղի կ՚ունենայ Կիրակի, 19 Յուլիս 2015-ին:

*(Երթեւեկը ապահովուած)*



Կ ՚ Ո Ւ Զ Ո Ւ Ի

**Թէքէեան Մշակութային Միութիւնը կարիքը ունի քարտուղարուհիի մը:**
**Հետաքրքրուողները կրնան դիմել Թէքէեան Կեդրոն, Ժըմմէյզի եւ կամ հեռաձայնել 01-566709 թիւին:**


ԶԱՐԹՕՆՔ

Դաւանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Հետեւաբար՝ թերթիս մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեանս տեսակէտը: Կամքէ անկախ սպրդած վրիպակներու պարագային, կ՚ապաւինինք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան:


ԶԱՐԹՕՆՔ
المدير المسؤول: إيلي الحاج
رئيس التحرير: سيفاك اكوبيان
تصدر عن شركة شيراك الصحافية (ش.م.م.)
جريدة سياسية أرمنية
زارتونك
Պատասխանատու խմբագիր՝ Սեւակ Յակոբեան
Պատասխանատու տնօրէն՝ Էլի Հաժ
Website: zartonkdaily.com
e-mail: zartonkadl@gmail.com
P.O.Box: 11-617 & 175-348 Beirut-Lebanon
Tel./Fax: +961 1 444225